



**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ
ԿՈԼԵԳԻԱ**

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 նոյեմբերի 2021 թվականի

թիվ 198

քաղ. Մոսկվա

**«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում
կազմակերպված սակարկություններում արժեթղթերի տեղաբաշխման եւ
շրջանառության անդրսահմանային թույլտվության մասին»
համաձայնագրի նախագծի մասին**

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում կազմակերպված սակարկություններում արժեթղթերի տեղաբաշխման եւ շրջանառության անդրսահմանային թույլտվության մասին» համաձայնագրի նախագծին (կցվում է) եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ ներպետական համաձայնեցում անցկացնելու համար:

2. Դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 90 օրացուցային օր հետո, սույն կարգադրության 1-ին կետում նշված համաձայնագրի նախագծի ներպետական համաձայնեցում անցկացնելու արդյունքների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնելու խնդրանքով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Մ. Մյասնիկովիչ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում կազմակերպված սակարկություններում արժեթղթերի տեղաբաշխման եւ շրջանառության անդրսահմանային թույլտվության մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության եւ Ղազախստանի Հանրապետության՝ ֆինանսական շուկայի կարգավորման ու զարգացման հարցերով գործակալության, Ղրղզստանի Հանրապետության նախարարների կաբինետի, Ռուսաստանի Դաշնության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի վրա,

Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում ընդհանուր ֆինանսական շուկայի գործունեության, Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) բորսային տարածքում արժեթղթերով թողարկման եւ առետրային գործառնությունների կատարման ազատությունն ապահովելու համար պատշաճ պայմաններ ստեղծելու նպատակով,

ձգտելով ապահովել ֆինանսական ծառայություններ սպառողների եւ ներդրողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը,

ճանաչելով անդամ պետությունների բորսային շուկաների իրացվելիության աճի համար պայմաններ ապահովելու անհրաժեշտությունը,

շահագրգռված լինելով անդամ պետությունների առևտրային և ներդրումային համագործակցությունն ամրապնդելու, անդամ պետությունների ֆինանսական շուկաների զարգացումը խթանելու հարցում,

հիմնվելով իրավահավասարության և փոխադարձ օգուտի սկզբունքների վրա, հաշվի առնելով անդամ պետություններից յուրաքանչյուրի տնտեսական շահերը,

համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

զուգահեռ տեղաբաշխում՝ տարբեր անդամ պետությունների 2 և ավելի բորսաներում (առևտրի կազմակերպիչների) արժեթղթերի միաժամանակյա տեղաբաշխում.

տեղեկատվության բացահայտում՝ անդամ պետությունների բոլոր շահագրգիռ անձանց, ռեզիդենտների համար տեղեկատվության հասանելիության ապահովում՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի համաձայն, որտեղ տեղի է ունենում տեղեկատվության բացահայտում, և անդրսահմանային թույլտվություն իրականացրած բորսայի (առևտրի կազմակերպիչ) պահանջների համաձայն.

բարձր կատեգորիայի ցուցակ՝ բորսայի (առևտրի կազմակերպիչ) կողմից սահմանված՝ կազմակերպված սակարկություններում տեղաբաշխման և (կամ) շրջանառության համար թույլտվության մասով առավել խիստ պահանջներին (ըստ արժեթղթերի յուրաքանչյուր տիպի) համապատասխանող արժեթղթերի ամբողջականություն.

անդրսահմանային թույլտվություն՝ մեկ անդամ պետության կազմակերպած սակարկություններում մեկ այլ անդամ պետության թողարկողի արժեթղթերի տեղաբաշխման (այդ թվում՝ զուգահեռ) եւ (կամ) շրջանառության թույլտվություն՝ բորսայի (առետրի կազմակերպչի) կողմից համապատասխան որոշում ընդունվելու միջոցով.

լիազորված մարմին՝ անդամ պետության մարմին, որը, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, օժտված է արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման եւ շրջանառության ընթացակարգերի, բորսաների (առետրի կազմակերպիչների) եւ արժեթղթերի շուկայի այլ մասնակիցների գործունեության կարգավորում իրականացնելու լիազորություններով (ներառյալ լիցենզավորումը, վերահսկողությունը (հսկողությունը))՝ բացառությամբ այն լիազորված մարմինների, որոնք օժտված են լիազորություններով միայն ֆինանսական շուկայի ոլորտում հատուկ իրավական ռեժիմով անդամ պետությունների իրավասությունների (տարածքների) շրջանակներում.

արժեթղթեր՝ թողարկողի այն բաժնետոմսերը եւ պարտատոմսերը, որոնք թողարկողի գրանցման պետությունում բորսայի (առետրի կազմակերպչի) կողմից ընդունվել են տեղաբաշխման եւ (կամ) շրջանառության համար:

Սույն համաձայնագրում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 2

1. Սույն համաձայնագրի առարկան անդրսահմանային թույլտվության ապահովումն է:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում գրանցված բորսաներին (առետրի կազմակերպիչներին) հնարավորություն է ընձեռում

թույլատրելու այլ անդամ պետություններում գրանցված արժեթղթերի ոչ պակաս բարենպաստ պայմաններով տեղաբաշխումը (զուգահեռ տեղաբաշխումը) եւ (կամ) շրջանառությունը, քան այդ անդամ պետությունում գրանցված արժեթղթերի թույլտվության համար ներկայացվող պայմանները՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի պահանջների պահպանումը:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն հնարավորություն է ընձեռում իր տարածքում գրանցված թողարկողներին նախաձեռնելու անդրսահմանային թույլտվություն՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի պահանջների պահպանումը:

Թողարկողը պետք է մյուս անդամ պետություններում կազմակերպված սակարկություններում պահպանի իր պետության օրենսդրությամբ սահմանված՝ արժեթղթերի տեղաբաշխման (շրջանառության) պայմանները եւ կարգը:

4. Սույն համաձայնագրի դրույթները չեն տարածվում՝

ա) միայն ֆինանսական շուկայի ոլորտում հատուկ իրավական ռեժիմով անդամ պետությունների իրավասությունների (տարածքների) շրջանակներում գործող նորմատիվ իրավական ակտերին (դրույթներին) համապատասխան գրանցված արժեթղթերի վրա.

բ) միայն ֆինանսական շուկայի ոլորտում հատուկ իրավական ռեժիմով անդամ պետությունների իրավասությունների (տարածքների) շրջանակներում գործող նորմատիվ իրավական ակտերին (դրույթներին) համապատասխան գործունեություն իրականացնող բորսաների (առետրի կազմակերպիչների) վրա:

5. Սույն համաձայնագիրը չի կարգավորում այն դեպքերը, երբ անդրսահմանային թույլտվությունը նախաձեռնվում է թողարկող չհանդիսացող անձի կողմից:

Հոդված 3

1. Բորսան (առևտրի կազմակերպիչը) անդրսահմանային թույլտվություն է տրամադրում հետևյալ պայմանների միաժամանակյա կատարման դեպքում՝

ա) այն անդամ պետությունում արժեթղթերի թողարկման գրանցումը (պետական գրանցումը), որտեղ գրանցված է թողարկողը, իրականացվել է այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կամ իրականացվել է նույնականացման համարի տրամադրում.

բ) այն արժեթղթերի թողարկումը, որոնց անդրսահմանային թույլտվությունը նախաձեռնվում է անդամ պետությունների մեկ կամ մի քանի բորսաներում (առևտրի կազմակերպիչներ), ներառված է այն անդամ պետության բորսայում (առևտրի կազմակերպիչի) բարձր կատեգորիայի ցանկում, որտեղ գրանցված է թողարկողը:

2. Բորսայի (առևտրի կազմակերպիչի) գրանցման պետության լիազորված մարմնում արժեթղթերի ազդագրի, արժեթղթերի թողարկման եւ (կամ) տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվության, արժեթղթերի թողարկման գործընթացին ուղեկցող այլ փաստաթղթերի գրանցում չի պահանջվում:

Հոդված 4

Անդրսահմանային թույլտվություն ստացած արժեթղթերով գործարքի կատարման վայր է համարվում այն պետությունը, որի տարածքում գտնվում է բորսան (առևտրի կազմակերպիչը), որի առևտրային համակարգում կատարվել է տվյալ գործարքը:

Հոդված 5

1. Լիազորված մարմինները, անհրաժեշտության դեպքում, անդամ պետությունների բորսաներին (առևտրի կազմակերպիչներին) ցուցաբերում են

աջակցություն բորսաների (առետրի կազմակերպիչների) միջև փոխգործակցություն սահմանելու գործում (այդ թվում՝ բորսաների (առետրի կազմակերպիչների) կողմից համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով):

2. Սույն համաձայնագրի իրականացման շրջանակներում յուրաքանչյուր անդամ պետության լիազորված մարմին աջակցություն է ցուցաբերում մյուս անդամ պետության (ըստ նրա հարցման) բորսային (առետրի կազմակերպչին)՝ իր պետության օրենսդրության՝ այն թողարկողներին ներկայացվող պահանջների հետ կապված տեղեկատվություն ներկայացնելու ձեռով, որոնց նկատմամբ այդ լիազորված մարմինն ունի կարգավորման եւ (կամ) հսկողության, վերահսկողության լիազորություններ:

Հոդված 6

1. Անդրսահմանային թույլտվություն ստանալու նպատակով թողարկող անդամ պետության բորսա (առետրի կազմակերպչին) ուղարկում է փաստաթղթեր՝ այդ պետության լիազորված մարմնի եւ (կամ) բորսայի (առետրի կազմակերպչի) սահմանած կարգին համապատասխան:

2. Բորսան (առետրի կազմակերպիչը), իր կանոններով սահմանված ընթացակարգերի եւ ժամկետների համաձայն, իրականացնում է թողարկողից ստացված փաստաթղթերի ստուգումը՝ կազմակերպված սակարկություններում արժեթղթերի տեղաբաշխման եւ շրջանառության թույլտվության պահանջների պահպանման մասով եւ կայացնում է անդրսահմանային թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին որոշում:

3. Բորսան (առետրի կազմակերպիչը) անդրսահմանային թույլտվության (այդ թվում՝ անդրսահմանային թույլտվություն տրամադրելը մերժելու) վերաբերյալ որոշում կայացնելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ ապահովում է թողարկողի եւ թողարկողի գրանցման պետության բորսայի (առետրի կազմակերպիչների) կայացրած որոշման մասին տեղեկացումը:

4. Անդրսահմանային թույլտվության մասին տեղեկատվությունը թողարկողի կողմից ենթակա է բացահայտման, դրա գրանցման պետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան, բորսայի (առևտրի կազմակերպչի) կողմից անդրսահմանային թույլտվություն տրամադրելու մասին տեղեկատվությունն ստանալու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 7

1. Արժեթղթերի այն թողարկողները, որոնց նկատմամբ տրամադրվել է անդրսահմանային թույլտվություն, պետք է պահպանեն տեղեկատվության բացահայտմանը ներկայացվող պահանջները, որոնք սահմանված են՝

ա) անդրսահմանային թույլտվություն տրամադրած բորսայի (առևտրի կազմակերպչի) գրանցման պետությունում՝

այդ պետության բորսայի (առևտրի կազմակերպչի) կանոններով,

այդ պետության օրենսդրությամբ.

բ) թողարկողի գրանցման պետությունում՝

բարձր կատեգորիայի ցուցակում թողարկողի արժեթղթերի ներառումն իրականացրած այդ պետության բորսայի (առևտրի կազմակերպչի) կանոններով.

այդ պետության օրենսդրությամբ:

2. Անդրսահմանային թույլտվություն ստացած թողարկողները պետք է պահպանեն ներքին (ինսայդերական) տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործմանը եւ շուկայի մանիպուլյացիային հակազդելու մասին պահանջները, որոնք սահմանված են անդրսահմանային թույլտվություն իրականացրած բորսաների (առևտրի կազմակերպիչների) գրանցման պետությունների եւ արժեթղթեր թողարկողի գրանցման պետության կողմից:

3. Անդրսահմանային թույլտվություն տրամադրած բորսան (առետրի կազմակերպիչը) «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի իր պաշտոնական կայքում տեղեկատվությունը հրապարակելու միջոցով պարտավոր է բացահայտել հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) այլ անդամ պետության թողարկողի արժեթղթերը կազմակերպված սակարկություններում տեղաբաշխման եւ շրջանառության համար թույլատրված արժեթղթերի ցուցակում ներառելու մասին.

բ) կազմակերպված սակարկություններում տեղաբաշխման (շրջանառության) համար թույլատրված արժեթղթերի ցուցակից անդրսահմանային թույլտվություն ստացած արժեթղթերը հանելու մասին, այդ արժեթղթերով սակարկությունները դադարեցնելու մասին, այդ արժեթղթերով սակարկությունները կասեցնելու (վերսկսելու) մասին բորսայի (առետրի կազմակերպչի) կողմից որոշումներ կայացվելու մասին.

գ) բորսայի (առետրի կազմակերպչի) կանոններին համապատասխան՝ այդ արժեթղթերի նկատմամբ սակարկությունների թույլատրելի ռեժիմների ցանկի կրճատման մասին, այդ արժեթղթերի ցուցակման կատեգորիաների (մակարդակների) փոփոխման մասին.

դ) արժեթղթերով առանձին գործառնություններ կատարելու արգելքներ կամ սահմանափակումներ սահմանելու մասին՝ նշելով արգելքի (սահմանափակման) գործողության ժամկետը, այն անդամ պետության լիազորված մարմնի որոշմամբ արժեթղթերով սակարկությունները կասեցնելու մասին, որտեղ գրանցված է բորսան (առետրի կազմակերպիչը):

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված տեղեկատվության բացահայտումն իրականացվում է ոչ ուշ, քան բորսայի (առետրի կազմակերպչի) կողմից համապատասխան իրադարձության առաջացման մասին տեղեկություններն ստանալու օրվան հաջորդող կամ համապատասխան որոշում ընդունելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օր հետո:

5. Անդրսահմանային թույլտվություն տրամադրած բորսան (առետրի կազմակերպիչը) տեղեկացնում է թողարկողի եւ նրա արժեթղթերի մասին հրապարակային տեղեկատվության նկատմամբ հասանելիության մեխանիզմի մասին, այդ թվում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում, որտեղ բացահայտվում է նշված տեղեկատվությունը, թողարկողի եւ (կամ) թողարկողի գրանցման պետության բորսայի (առետրի կազմակերպիչի) էջին (էջերին) հղումը տեղադրելու եղանակով:

6. Բորսան (առետրի կազմակերպիչը), որն անդրսահմանային թույլտվություն է տրամադրել իր կանոններին համապատասխան, իրավունք ունի բացահայտելու այլ տեղեկատվություն, որը կոնֆիդենցիալ չի համարվում անդամ պետության օրենսդրության համաձայն, այն թողարկողի եւ արժեթղթերի մասին, որոնց նկատմամբ իրականացվել է անդրսահմանային թույլտվություն, ինչպես նաեւ այնպիսի միջոցների մասին, որոնք կիրառվում են բորսայի (առետրի կազմակերպիչի) կողմից այդ արժեթղթեր թողարկողի նկատմամբ:

7. Թողարկողի գրանցման պետության բորսան (առետրի կազմակերպիչը) թողարկողի արժեթղթերը բարձր կատեգորիայի ցուցակից հանելու դեպքում համապատասխան որոշումն ընդունելու օրվանից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է անդրսահմանային թույլտվություն տրամադրած մյուս անդամ պետությունների բորսաներին (առետրի կազմակերպիչներին):

8. Սույն հոդվածի 7-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա անդրսահմանային թույլտվություն տրամադրած բորսաները (առետրի կազմակերպիչները), անդամ պետության օրենսդրությանը եւ իրենց կանոններին համապատասխան, իրավասու են որոշում ընդունելու արժեթղթերի ցուցակման կատեգորիաների (մակարդակների) փոփոխության, ինչպես նաեւ կազմակերպված սակարկություններում տեղաբաշխման (շրջանառության) համար թույլատրված արժեթղթերի ցուցակից դրանք հանելու մասին եւ որոշում կայացնելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ, թողարկողին տեղեկացնում են կայացված որոշման մասին:

Ընդ որում՝ մինչեւ կազմակերպված սակարկություններում տեղաբաշխման (շրջանառության) համար թույլատրված արժեթղթերի ցանկից դրանք հանելու մասին որոշում կայացնելը, այդ արժեթղթերով կնքված գործարքների մասով հաշվարկները պետք է ավարտվեն անդրսահմանային թույլտվություն տրամադրած անդամ պետության օրենսդրությամբ եւ (կամ) բորսայի (առետրի կազմակերպչի) կանոններով սահմանված կարգով:

Հոդված 8

1. Անդամ պետության լիազորված մարմինը, որտեղ գտնվում է անդրսահմանային թույլտվություն տրամադրած բորսան (առետրի կազմակերպիչը), իրավունք ունի իրականացնելու իր իրավասության սահմաններում համապատասխան բորսայում (առետրի կազմակերպչի) թողարկողի այն արժեթղթերի տեղաբաշխման (զուգահեռ տեղաբաշխման) եւ (կամ) շրջանառության ստուգում, որոնց նկատմամբ տրամադրվել է անդրսահմանային թույլտվություն, եւ անհրաժեշտության դեպքում դիմելու արժեթղթեր թողարկողի գրանցման պետության լիազորված մարմին՝ արժեթղթեր թողարկողի գործունեության ստուգում անցկացնելու միջնորդությամբ:

2. Լիազորված մարմիններն իրավունք ունեն կազմակերպելու թողարկողի այն արժեթղթերի տեղաբաշխման (զուգահեռ տեղաբաշխման) եւ (կամ) շրջանառության համատեղ ստուգումներ, որոնց նկատմամբ, սույն համաձայնագրի իրականացման շրջանակներում համապատասխան բորսայում (առետրի կազմակերպչի), տրամադրվել է անդրսահմանային թույլտվություն, եթե նման ստուգումների անցկացումը չի հակասում այդ անդամ պետությունների օրենսդրությանը:

3. Այն դեպքում, երբ խախտումները կապված են այն արժեթղթեր թողարկողի՝ այդ արժեթղթերի սեփականատերերի, այլ անդամ պետությունների ռեզիդենտների առնչությամբ խտրական գործողությունների հետ, որոնց

նկատմամբ տրամադրվել է անդրսահմանային թույլտվություն, այն անդամ պետության լիազորված մարմինը (լիազորված մարմինները), որի ռեզիդենտներն են թողարկողի արժեթղթերի այն սեփականատերերը, որոնց իրավունքները խախտվել են, իր պետության օրենսդրությանը համապատասխան, կիրառում է միջոցներ, որոնք ուղղված են նշված արժեթղթեր թողարկողին, նրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց պատասխանատվության ենթարկելուն:

4. Այն դեպքում, երբ խախտումները կապված են այլ անդամ պետության արժեթղթեր թողարկողի եւ (կամ) նրա պաշտոնատար անձանց՝ արժեթղթերի շուկայում այն անդամ պետության չարաշահումների մասով գործողությունների հետ, որտեղ գտնվում է բորսան (առետրի կազմակերպիչը) (մասնավորապես՝ շուկայի մանիպուլյացիայի, ներքին (ինսայդերական) տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման հետ), ապա այն անդամ պետության լիազորված մարմինը, որտեղ գրանցված է բորսան (առետրի կազմակերպիչը), իր պետության օրենսդրությանը համապատասխան, կիրառում է միջոցներ, որոնք ուղղված են արժեթղթեր թողարկողի, նրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց պատասխանատվության ենթարկելուն:

5. Սույն հոդվածին համապատասխան ստուգում իրականացնող լիազորված մարմինը ստուգում անցկացնելու արդյունքների հիման վրա՝ արժեթղթեր թողարկողի, նրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց նկատմամբ ազդեցության միջոցներ կիրառելու մասին որոշումն ընդունելու օրվանից ոչ ուշ, քան 14 աշխատանքային օր հետո, այդ մասին տեղեկացնում է այն անդամ պետության լիազորված մարմինին, որտեղ գրանցված է արժեթղթեր թողարկողը, այդ թվում՝ այդպիսի թողարկողին պատասխանատվության ենթարկելու նպատակով, եթե համապատասխան իրավախախտման համար պատասխանատվությունը նախատեսված է թողարկողի գրանցման պետության օրենսդրությամբ:

6. Այն անդամ պետության լիազորված մարմինը, որտեղ գտնվում է բորսան (առետրի կազմակերպիչը), սահմանված կարգով տեղեկացնում է բորսային (առետրի կազմակերպիչին) ներքին (ինսայդերական) տեղեկատվության

ոչ իրավաչափ օգտագործման եւ շուկայի մանիպուլյացիայի պարզված փաստի մասին: Բորսան (շուկայի կազմակերպիչը) անհրաժեշտության դեպքում կիրառում է իր կանոններով նախատեսված միջոցներ:

7. Պատասխանատվության միջոցների կիրառման մասով անդամ պետությունների պետական իշխանության մարմինների եւ լիազորված մարմինների կողմից ընդունված՝ անդրսահմանային թույլտվություն ստացած թողարկողների նկատմամբ որոշումների կատարման հետ կապված հարցերը սահմանվում են թողարկողի գրանցման պետության օրենսդրությամբ, եթե այլ բան սահմանված չէ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

8. Սույն համաձայնագրի իրականացման նպատակներով՝ լիազորված մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակումն իրականացվում է «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին համապատասխան:

Հոդված 9

1. Սույն համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերը լիազորված մարմինների կողմից ուսումնասիրվում են համատեղ խորհրդակցությունների անցկացման շրջանակներում, անհրաժեշտության դեպքում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների ներգրավմամբ:

2. Սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

3. Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

4. Սույն համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մասն է կազմում:

5. Սույն համաձայնագիրը չի ազդում անդամ պետությունների՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են իրենք:

Հոդված 10

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է _____ քաղաքում, 20 ____ թվականի _____ «__»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի կողմից՝**

**Բելառուսի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ղազախստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ղազախստանի Հանրապետության ֆինանսական
շուկայի կարգավորման ու զարգացման հարցերով
գործակալության կողմից՝**

**Ղրղզստանի Հանրապետության
նախարարների կաբինետի կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության
կառավարության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության
կենտրոնական բանկի կողմից՝**